



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը

ք.Հրազդան

28.03.2018թ. ժամը 11.<sup>00</sup>

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

**- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ**

- Կ.Մարգարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Հ.Հայրապետյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Մ.Մանասյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Պետրոսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Ս.Եղիազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
- Վ.Սեպոյան - ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Հ.Ադամյան - ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

**Հրավիրված էր՝**

Մ.Հովհաննիսյան - <<Կոտայք>> ԶՕԸ-ի գլխավոր ճարտարագետ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝**

**1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

**2. Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ աղբահանության պայմանագրերի կնքման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կ. Թումոյան/*

**3.Այլ հարցեր**

## **ԼՍԵՑԻՆ՝**

Մինչ օրակարգային հարցերի քննարկումը ՀՀ Կոտայքի մարզպետն անդրադարձավ ս/թ մարտի 24-ի ուժգին քամու հետևանքով մարզի համայնքներում արձանագրված վնասներին:

**Համայնքների ղեկավարներին առաջարկվեց** համապատասխան հանձնախմբերի միջոցով իրականացնել գրանցված դեպքերի ճշգրիտ հաշվառում և սահմանված կարգով ապահովել տեղեկատվության տրամադրումը արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողովին:

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի ղեկուցումը մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

**Բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվեց** ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կ. Թումոյանի ղեկուցումը մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ աղբահանության պայմանագրերի կնքման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

**Համայնքների ղեկավարներին առաջարկվեց** մինչև ս/թ մայիս մասվա վերջն ամբողջությամբ ավարտել իրավաբանական անձանց հետ աղբահանության պայմանագրերի կնքման գործընթացը:

Խոսվեց նաև ապրիլի 14-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի մասնակցության մասին:

### **3. Օրակարգի այլ հարցերում քննարկվեցին.**

1) Համայնքներում ոռոգման ջրի մատակարարման աշխատանքների և «Հայքրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մարզի համայնքների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնման նախագծային աշխատանքների մասին, որը ներկայացրեց «Կոտայք» ԶՕԸ-ի գլխավոր ճարտարագետ Միրան Հովհաննիսյանը:

Նշվեց, որ ջրային տնտեսության ԾԻԳ ՊՀ-ի կողմից մարզի 13 համայնքներում իրականացվելու են ներտնտեսային ոռոգման ցանցի վերանորոգման-վերականգնման աշխատանքներ՝ 2 մլն 73,1 հազար դոլար գումարի շրջանակներում, որի ծախսերն իրականացվելու են համաֆինանսավորման ծրագրով (10%-ը վճարելու են համապատասխան համայնքները):



**Շահառու համայնքների ղեկավարներին առաջարկվեց** համայնքներում քննարկումներ կազմակերպելով՝ ապահովել համաֆինանսավորման ծրագրի իրականացումը:

- 2) Համայնքներում հեղուկ գազի օգտագործման կարգավորման մասին իրազեկում ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը:

**Համայնքների ղեկավարներին առաջարկվեց** ձեռնպահ մնալ հեղուկ գազի լցակայաններ կառուցելու նպատակով հողամասերի հատկացումից և շինթույլտվությունների տրամադրումից՝ մինչև հարցի օրենսդրական կարգավորման հիմքի առկայությունը:

- 3) Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող համայնքային կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը կազմակերպելու անհրաժեշտության մասին խոսեց ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական Հ.Ադամյանը:

Արձանագրվեց, որ մարզում գործող 53 մանկապարտեզներից միայն 4-ն ունեն պահանջվող լիցենզիաներ:

**Համայնքների ղեկավարներին առաջարկվեց** մինչև ս/թ մայիսի 1-ը ավարտել նախադպրոցական հաստատությունների լիցենզավորման գործընթացը:

- 4) ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական Հ.Ադամյանը հանդես եկավ համապետական մարզամշակութային միջոցառումներին համայնքների մասնակցության մասին հայտարարությամբ:

- 5) Պետական պատվերներ տրամադրող ուղեգրող հանձնաժողովների գործունեության և օրենքով սահմանված նոր կարգի մասին իրազեկում ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցապահովման վարչության պետ Վ. Ոսկանյանը:

- 6) Կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված տվյալների միասնական էլեկտրոնային բազայում իրավունքի սուբյեկտների բացակայող տվյալների լրացման, ամբողջականացման և վերջնական տվյալները ներկայացնելու մասին պարզաբանում ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ.Ավետիսյանը, որին հանձնարարվեց գործընթացի վերաբերյալ համապատասխան շրջաբերականներ ուղարկել համայնքներ:

 Կ. ԳՈՒԼՈՅԱՆ